ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք,
Լ. Նավասարդյան 19/1, Հեռ. 095 702854 ,
armavir.shahumyan@mta.gov.am

N 122
02 դեկտեմբեր 2016թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱԾՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարո՛ն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Համբարձումյան
095.14-30-60

ԱՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.74/13607-16
«05» 12 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 նոյեմբերի 2016թվականի N 40-Ա

ԱՍՅԱ ԼԵՎՈՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի <<բ>> ենթակետով, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար, կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի տեղակալ Ասյա Լևոնի Նավասարդյանի և համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Մխիթարի Համբարձումյանի նկատմամբ կիրառել խրախուսանք դրամական պարգևատրման միջոցով՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16թ. նոյեմբերի 14
գ.Շահումյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Շահումյան համայնքի ղեկավարի
2016թվականի նոյեմբերի 14-ի
N 40-Ա կարգադրության

ՑՈՒՑԱԿ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

1. Նավասարդյան Ասյա Լևոնի/համայնքի ղեկավարի տեղակալ/ -160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Համբարձումյան Գոհար Մխիթարի/ աշխատակազմի քարտուղար/ -150000/մեկ հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

09 նոյեմբերի 2016թվականի N 39-Ա

ԱՍՅԱ ԼԵՎՈՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի <<Է>> կետով, *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի տեղակալ Ասյա Նավասարդյանին և համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Համբարձումյանին և 2016 թվականի նոյեմբերի 9-ին գործուղել Արմավիրի մարզպետարան:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին /Ս.Հակոբյան/՝ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 16 թ. նոյեմբերի 9
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2016թվականի N 41-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հնարապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, 43-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 25-ի N3-Ա որոշումը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի բնակիչ Կարեն Սանասարի Յայլոյանին հոր մահվան կապակցությամբ /մահացած 25.10.2016 թ./ համայնքի բյուջեից տրամադրել դրամական օգնություն՝ 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. նոյեմբերի 14
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբերի 2016թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N62-Ն որոշման 2-րդ կետը, *որոշում եմ*՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 09 բաժին 1 խումբ 1 դասի <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> 4239 հոդվածից պակասեցնել 4310000/չորս միլիոն երեք հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ,

2) 01 բաժին 1 խումբ 1 դասի <<Աշխատողների աշխատավարձեր>> 4111 հոդվածին ավելացնել 2000000/երկու միլիոն/ ՀՀ դրամ,

3) 01 բաժին 1 խումբ 1 դասի <<Պարգևատրումներ>> 4112 հոդվածին ավելացնել 1310000/մեկ միլիոն երեք հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

4) 08 բաժին 2 խումբ 3 դասի <<Աշխատողների աշխատավարձեր>> 4111 հոդվածին ավելացնել 1000000/մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. նոյեմբերի 8
գ.Շահումյան